

ՓՈՒԱՌՈՒԹԻՒՆՔ ԲԱՐՋՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ ՍԿՍԵԱԼ 1854 ԹՈՒԱԿԱՆԷՆ

ՏԱՐԻ	առ. 0/0	Գ Ի Ն Արտադրութեան (Taux d'émission)	Նախնական Գրանցվելու ժամանակ	Իրական Արտադրելու	ՏԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆՔ (Annuités)		Մ Է ՝ յ Հատուցանելիք 1 յունուար 1874	
					Շահ (Intérêts)	Գլխավճար (Amortissement)		
1	1854	6	80	75,0	60,0	3,110000	2,140000	51,822500
2	1855	4	102 ⁵ / ₈	125,0	128,3	4,000000	2,250000	100,000000
3	1858	6	76	125,0	95,0	5,755000	2,993000	95,907500
4	1860	6	53 ⁵ / ₄	50,9	27,4	2,616000	1,000000	42,900000
5	1862	6	68	200,0	136	8,220000	7,780000	138,930000
6	1863	6	72	150,0	108	8,450000	7,550000	143,242500
7	1864	6	68	50,0	34,0			
	1865	5	50	909,1	454,5			
8	1865	6	66	150,0	99,0	6,707500	5,962500	113,137250
9	1868	6	83	150,0	124,6	—		530,968000
10	1869	6	54	555,6	300,0	31,775000	7,387500	
11	1870	3	45	792,0	356,4	23,694000	9,140000	789,800000
12	1871	6	68	142,5	96,9	8,373750	801250	139,264500
13	1872	9	98 ¹ / ₂	278,2	274,0	25,034000	—	
14	1873	6	58 ¹ / ₂	694,4	406,3	41,111740	6,944500	694,444500
Համագումար			4447,7	2700,4	212,946990	53,950750	4000,571750	
Անհատական պարտք (Dette flottante), 23 յունուարի 1874 (14,725275 օսմ. լիր.)			334,665441					
Համագումար պարտույց 'ի սկիզբն ամիս 1874`			4335,237191					
Պետք է յաւելուլ երկու փոխառութիւնքն 1874 թուոյն, այսինք երկաւիտ (Lots) 3 առ 0/0, արտադրուած 45 առ 0/0, և Ընդհանուր պարտքն 1874 թուոյն (Dette générale de 1874) 5 առ 0/0, արտադրութեան գինը 43 ¹/₂ առ 0/0: Ահաւաստիկ փոխառութեանց ջուլցակն 'ի վերջ թուականին 1874:								
ՓՈՒԱՌՈՒԹԻՒՆՔ	Նախնական Գրանցվելու ժամանակ	Իրական Արտադրելու	ՏԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆՔ		Մ Է ՝ յ Հատուցանելիք 1 յունուար 1875			
			Շահ	Գլխավճար				
Թիւ 1—14	2596,6	1764,9	144,518100	47,196750	2297,983250			
Նրկավճար	792,0	356,4	27,125700	840000	788,120000			
Ընդհանուր պարտք } 1865	890,9	445,5	94,545450	—	1890,909000			
1874	1000,0	435,0						
Համագումար			5279,5	3004,7	266,189250			
Գլխավճարելի տարւոյն 1875					48,036750			
Գլխավճար գրամագլուխ 31 հոկտեմբ. 1875 կ'ըլլայ					4928,975500			

Օրամանեան կառավարութիւնը հով. | Հատուցանելու վիճակի մէջ այս պլանայլ տարւոյն 1875 թուականին չգտնուեցաւ | պարտույց լրացեալ տարեորութիւն.

ներն. ուստի 6 հոկտեմբերի 1875 հետեալ պաշտօնական յայտարարութիւնն ըրաւ :

ա. Այսօրուքնէ սկսեալ (6 հոկտ. 1875) օսմանեան տէրութեան ներքին և արտաքին պարտուց տոկոսներն ու գլխավճարը մինչև հինգ տարի կէսի իջած են :

բ. Կտրօնից հատուցումն հետեալ կերպիւ պիտի կատարուի. առաջին կէսն ոսկի դրամով, և երկրորդ կէսն հարիւրին հինգ տոկոս տուող նոր արժէթղթերով, որոնց տոկոսը նոյնպէս ոսկի դրամով պիտի հատուցուի առաջին կիսուն հետ :

գ. Թէ առաջին կիսուն ամբողջապէս ոսկի դրամով հատուցման և թէ յիշեալ հարիւրին հինգ տոկոսին հատուցման համար երաշխաւորութիւն յատկացած են մտքատանց, ծխախոտի, և ալի ամբողջ հասոյթքն, ինչպէս նաև Եգիպտոսի հարկը. և եթէ ասոնք չբաւեն՝ պակսածն ոչխարաց տուրքէն պիտի հատուցուի :

դ. Եթէ հինգ տարին լրանալէն ետև, հարիւրին հինգ տոկոս տուող դրամա գլխու փոխուած կտրօններուն գումարն, որ 35 միլիոն օսմանեան լիւրայի կը հասնի, չկրնայ հատուցուիլ, պայմա. նաժամը նորէն պիտի երկարաձգուի մինչև որ արտաքին պարտուց ամենէն մօտաւոր պայմանաժամ ունեցողն ամբողջապէս հատուցուի. այն ժամանակն յիշեալ պարտուց հատուցմանը կապեալ երաշխաւորութիւններն ազատ մնալով՝ վերոյիշեալ հարիւրին հինգ տոկոսին և գլխավճարին ամբողջապէս հատուցմանը պիտի յատկանան :

Ուրիշ պաշտօնական յայտարարութիւն մըն ալ, 30 հոկտեմբերի 1875, կ'օրինագրէ հինգ կարգ (séries) արժէթղթի հանելու, 5 առ % տոկոս տրուող ոսկի դրամով, իւրաքանչիւր կարգն 7 միլիոն օսմանեան լիւրա, և առաջին կարգը պիտի հանուի 1875 թուին, երկրորդը՝ 1876 թուին, և այլն : Այս նոր արժէթղթից գլխավճարն ալ պիտի

սկսի, ամենէն ուշ, $\frac{1}{13}$ յունուարի 1887, վիճակահանութեամբ, 1 առ % :

Ահաւասիկ այս պաշտօնական յայտարարութիւնը :

ա. Երեսուներ հինգ միլ. (35,000000) օսմանեան լիւրայից արժէթղթի հանուեցաւ, որ տարին 5 առ % տոկոս պիտի տայ, վեց ամիսն անգամ մը հատուցանելու պայմանաւ որուն ձեռքն որ զանուի : Այս հատուցումն ոսկի դրամով պիտի ըլլայ ի կոստանդնուպօլիս և ուրիշ ամէն քաղաք, ուր հարիւրին 5 տոկոսով ընդհանուր պարտուց (էսիւս մը ումուսիյէ) տոկոսեացն հատուցումը կը կատարուի :

բ. Այս եղանակաւ հանուած արժէթղթից փոխարէնը պիտի հատուցուի լման և ոսկի դրամով տարին 1 առ % գլխավճարով, և այս գլխավճարը պիտի սկսի, ամենէն ուշ, $\frac{1}{13}$ յունուարի 1887, վիճակահանութեամբ :

գ. Յիշեալ արժէթղթերն ստորադրուած պիտի ըլլան ելումից նախաւորէն հանդերձ կնքով տէրութեան : Բաց ասկէ այն արժէթղթերը դործածուելու ժամանակն անոնց վրայ ստորագրութիւն պիտի դնէ՝ այս գործոյն յատկացեալ սիւնտիքներէն մէկը, կամ օսմանեան կայսերական Պանքան : Յիշեալ արժէթղթերը թուրքերէն, անգլիերէն և զաղղիերէն կարգադրուած պիտի ըլլան, և պիտի ընդունուին տէրութեան դրամարկեզներէն (միլի) կամ հասարակաց վարչութիւններէն իբրև երաշխաւորութիւն կամ ապահովութիւն՝ մի և նոյն կերպիւ որ կ'ընդունուի հարիւրին տոկոսաբեր ընդհանուր պարտուց (էսիւս մը ումուսիյէ) արժէթղթերն և արտաքին փոխառութեանց պարտատոմսերն :

դ. Հարիւրին 5 տոկոսաբեր յիշեալ 35 միլիոն օսմանեան լիւրայի արժէթղթի հինգ կարգի (séries) պիտի բաժնուին, որոնց իւրաքանչիւրն 7 միլիոն օսմանեան լիւրա պիտի ըլլայ, համապատասխանելով այն հինգ տարիներուն իւրաքանչիւրին, որոնց ընթացիկը մէջ ներքին և արտաքին պարտուց տոկոս

սեաց և գլխավճարին հատուցումն 'ի գործ պիտի դրուի վերջին գանձային կարգադրութեանց համեմատ: Անոր համար իւրաքանչիւր կարգի արժէթը լինէր՝ ամէն մէկ տարւոյն սկիզբը պիտի ստորագրուին, ինչպէս ծանուցուած է նախընթաց յօդուածոյն մէջ, և պիտի տրուին 'ի հատուցումն կիսոյն տոկոսեաց և գլխավճարին ներքին և արտաքին պարտուց: Յիշեալ հինգ կարգաց իւրաքանչիւրն ալ դարձեալ պիտի բաժնուի երկու մասունք, որոնց մէկուն տոկոսը պիտի սկսի $\frac{1}{13}$ յունուարի, և միւսոյն՝ $\frac{1}{13}$ յուլիսի:

Ե. Յամին 1881 յունուարի $\frac{1}{13}$ նորէն ձեռք պիտի առնուի ներքին և արտաքին պարտուց տոկոսեացն ու գլխավճարին բոլորական հատուցումն ոսկի դրամով. ուստի անցեալ հինգ տարիներուն ընթացիցը մէջ իւրաքանչիւր կտրուէն հանուած արժէթը լինող թիւը պիտի քննուի ու պիտի որոշուի վճարար. և այն արժէթը լինէր որ գործածուած չեն, պիտի մնան արմատական (զօչաւն) տուժարին մէջ և պիտի չհանուին:

Գ. Հարիւրին 5 տոկոս տուող այս արժէթը լինող շինութիւնը, գրուածոյն ձեռք, գումարն և հանուելուն ու տրուելուն ուրիշ պայմանները պիտի որոշուին եւլմոյց պաշտօնաւարանէն:

Է. Այս օրինաց համեմատ հանուած արժէթը լինող տոկոսիքն ապահովեալ պիտի ըլլան մի և նոյն երաշխաւորութեամբ որով ապահովեալ են ներքին և արտաքին պարտուց տոկոսեացն ու գլխավճարին կիսոյն ոսկի դրամով հատուցումն, և մի և նոյն քննութեան և տեսչութեան տակ պիտի գտնուին:

Ի լրումն դանձային նախընթաց տրամադրութեց Բարձրապատիւ Մեծ-Եպարքոսն հետեւեալ նամակը գրեց առ Տնօրէնս օսմանեան Կայսերական Պանքային:

Տեաքը. — Գիտեք որ Կայսերական հրամանաւ, 6 հոկտ. 1875 թուականով, Բ. Դրան հրատարակած յայտարարութեան համեմատ՝ Տէրութեան

պարտուց տոկոսին ու գլխավճարին կէսը ոսկի դրամով, միւս կէսն ալ 5 առ % նոյնպէս ոսկի դրամով հատուցանելի շահ բերող նոր արժէթը լինով մը պիտի հատուցուի մինչև հինգ տարի. և թէ այս հատուցմանց ամենն ալ եղիպտոսի հարկով, և մութաստանց աղի և ծխախոտի հասոյթներով երաշխաւորեցան, որոնք եթէ չբաւէին՝ ոչխարաց տասաւորողին մէկ մասն ալ վրանին պիտի աւելնայ, և այսպէս իրական երաշխաւորութիւնները տրուեցան մեր փոխառութիւնները կնքող և արժէթը լինող գնողներուն, վերջապէս որոշուեցաւ որ վերը նշանակուած հասոյթները օսման նեան Կայսերական Պանքային և անոր գործակցութեամբն ու հսկողութեան տակ պաշտօն վարելու համար կարգուելիք սինաիքներուն յանձնուին:

Կայսերական կառավարութիւնը տեսնելով որ յիշեալ պաշտօնական յայտարարութեան 1876 յունուարի կտրօնին հատուցուելուն մէջ մնացած ժամանակը կարճ էր, և այն երկուք ու կէս ամսուան մէջ կտրօնին համար պէտք եղած դրամը ժամանակին պատրաստելու չէլով, եւլմոյց նախարարութեան միջոցաւ երկու միլիոն լիրա սղէռլին յանձնեց օսմանեան Պանքային, ոչ միայն յատկացեալ հասոյթներէն, այլ և տէրութեան ուրիշ մուտքերէն:

Այն երկու միլիոն լիրա սղէռլին հետեւեալ կերպով կը բաժնուի:

Վեց հարիւր այսչափ հազար լիրա սղէռլին՝ 1860-62-64-65 թուականներուն փոխառութեանց հատուցմանց համար:

Եօթնհարիւր այսչափ հազար լիրա սղէռլին տէրութեան գանձուն փոխառուողաց դիւրութիւններ տալու համար, որոնց պայմանաժամն երկարեցաւ: Վեց հարիւր հազար լիրա սղէռլին՝ $\frac{1}{13}$ յունուարի 1876 հատուցուելիք կտրօնին համար:

Այս հատուցումներէն զատ՝ Կայսերական գանձն հարիւր հազար լիրա սղէռլին հատոյց Պոն տիշ Դրեզդենբու փոփոխութեան փոխանորդներուն:

Նմանապէս կոստանդնուպոլսի մէջ հատուցուելիք Գոնուպիտէի կտրօնները գնելու համար հարկւր հազար լիրա սղէպին յատկացունել որոշեց և կէսն արդէն հատոյց:

Այս ժամուս՝ կոստանդնուպոլսի կրտրօնին համար կը մնայ հատուցուելիք 170 հազար լիրա սղէպին, և Պօս և տիշ Դրեզօրներուն համար ալ 100 հազար լիրա սղէպին: Այս վերջին հատուցմանց պայմանաժամը դեռ աւարտած չըլլալով, և հետեւեալ կայսերական Պանքան ալ ժամանակ ունենալով իրեն յատկացեալ հատոյթներէն այդ գումարը հայթայթելու, ամենափոքր դժուարութիւն մը չի մնար: Ասոնցմէ դիւրաւ կը հասկընաք, Տեաքը, թէ վերոյիշեալ բոլոր հատուցումներն արդէն ապահովեալ ըլլալով թէ երայխաւորութեան տրուած և թէ անոնցմէ դուրս հատոյթներով, և այս ալ ժամանակին կարծութեան պատճառաւ, կը հասկընաք, կ'ըսեմ, որ կայսերական կառավարութեան որոշած սկզբան համեմատ ժամանակն եկած է նոյնպէս ապագային համար օսմանեան Պանքային յանձնել տէրութեան պարտուց տոկոսին և դիւլալմարին հատուցման յատկացեալ հատոյթներն ապահովելու գործը, այն-

պէս որ կառավարութիւնը չկարենայ ուրիշ բանի գործածել զանոնք:

Հետեւեալ, Պանքային արտօնութիւն տրուած է կայսերական հրամանաւ, որ այս օրէն իւր ձեռքն յանձնել տայ անուղղակի տրոց (մաքսատանց) վարչութեան բոլոր հատոյթներն, անոնց վարչական ծախքերը վար երթալով, ինչպէս նաև ւէճիւններուն և այլոց հատուցման յատկացեալ թեթև գումարն որ յայտնի է, և այս ամէնը պիտի ըլլան առանց դաշխու 6 հոկտեմբերի յայտարարութեան մէջ Սինտիքներուն մասին եղած որոշման:

Այս մտքը հրամաններ տրուեցան անուղղակի տրոց վերատեսչութեան:

Օսմանեան կայսերական Պանքան ալ իւր կողմանէ հրաւիրեալ է անյապաղ կատարել այս պաշտօնը՝ յատուկ պաշտօնատար մը նշանակելով, որ մշտնջենապէս հսկողութիւն ընէ կոստանդնուպոլսի մաքսատան անտուկներուն շարժմանն ու հաշիւներուն, որպէս զի հատուկից յաւելուածն ամբողջապէս իրեն յանձնուի, բնաւ առանց իրաւունք ունենալու յիշեալ վարչութեան գործերուն խառնուելու:

Հաճեցէք, Տեաքը, ընդունիլ խորին յարգանացս հաւաստիքը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՅՆ ԵՒ ԱՅՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

ԱՄԵՐԻԿԱ ՀԻՍՍՈՒՄԱՆ

Տարածութիւն քառ. քիլոմէդր	.	.	5,139726
Բնակիչ	.	.	38,247341
Մուտք (1875-76) տարեկան	.	Փռ.	1972,558800
Ելք (1875-76) տարեկան	.	»	1448,451180
Պարտք (1 յուլիս 1874)	.	»	11853,430865
Ծախք պարտուց. տարեկան	.	»	205,218522